

ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ ԵՎ ԷԹԻԿԵՏԱՅԻՆ
ԲԱՆԱԶԵՎԵՐԻ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

ԶԱՐԻԿ ԱՂԱԶԱՆՅԱՆ

*«Բառը... կենդանի էակ է:
Բառը խոսք է, խոսքը՝ Աստված»:*
Վ. Հյուգո

Էթիկետը (վարվելակարգը) տարբեր իրավիճակներում յուրօրինակ «հաղորդակցական-լեզվավարքագծային-բարոյագիտական գրագիտության» որոշակի կանոնների ամբողջությունն է. եթե լեզվական կադապարների միջոցով ստեղծվում է աշխարհի երևակայական պատկերը, ապա տվյալ կանոնակարգի միջոցով բացահայտվում է հասարակության յուրաքանչյուր էակի բարեկրթության ու քաղաքակրթության աստիճանը:

Ցանկացած հաղորդակցում իրականացվում է տարբեր իրավիճակներում՝ ուղեկցվելով ամենաբազմազան հանգամանքներով: Տեղեկատվության մի մասը գիտակցված է, մյուս մասը՝ չգիտակցված. հաղորդվող նյութը ասածի բովանդակությունը (միջուկը), գիտակցված է, չգիտակցվածի մեջ են մտնում այն տվյալները, որոնք «տեսանելի են դարձնում» հաղորդակցական իրավիճակն ու նրա տերերին՝ հաղորդակցվողներին: Ահա այս չգիտակցվածի արժևորման՝ գիտակցվածության դաշտ բերելն ու հիշողության մեջ ամրագրելն է հազարամյակներ շարունակ զբաղեցրել մարդկությանը... **Ժամանակի ընթացքում մարդու հիշողության բովանդակությունը կազմող այդ լեզվական և ոչ լեզվական մտապատկերներն ուղեղի մեջ կազմում են ցանցեր ու շղթաներ, որտեղ բանաձևերը, տեսողական, լսողական ու զգայական այլ մտապատկերների հետ միահյուսված, դառնում են առանձին հանգույցներ...** Մարդը զարդարված է դարերի կուտակումով, և տարբեր ժողովուրդների մշակութային ժառանգության մաս են կազմում նրա խոսքային և բարոյական վարքը նորմավորող գրված և «չգրված» օրենքները, որոնք ամենանախնական ձևով արտահայտվել են բանահյուսության մեջ, դրսևորվել առակների, առածների, ասացվածքների, խորհուրդների, պատվիրանների ձևով: Դեռևս հին աշխարհում դասական ճարտասանության արվեստի տեսության շարադրման մեջ առանձնացվել է նաև «Տրամադրություն» բաժինը: Այսօր էլ Մուրբ Գրոց հոգևոր խրատները տալիս են ճշմարիտ վարքի իմացություն: Էթիկետային բանաձևերի ազդեցությունը մարդկանց վարքի վրա զգացական

է, սակայն այդ զգացականը միահյուսվում է նրանց խոհական գործունեության հետ, իսկ «էրբ միտքն ու զգացմունքը եղբայրացած են միմյանց հետ, տիեզերքն են գրկում» (Ավ. Իսահակյան):

Հաղորդակցական տարբեր իրադրություններին բնորոշ կանոնակարգային բանաձևերը մարդն իր մեջ կրում է ի սկզբանե, և նրա էությունը ինչ-որ տեղ ածանցյալ է դառնում այսպիսի կրումից: 21-րդ դարակգրում առավելապես գործնական էթիկետն է կարևորվում. բանաձևային համակարգի արտահայտիչների, նրանցում հաջորդականության կարգի պահպանման նորմերին հետևելը հատկապես անհրաժեշտ է պաշտոնական և կիսապաշտոնական իրադրություններում, գործնական գրագրություններում, բանավիճային արվեստում:

Էթիկետի այս կառուցամասի նախասկզբնական ընկալումը շատ ավելի տարողունակ էր, քան այսօր: Մեր օրերում այն ընկալվում է սուկ որպես բանաձևային համակարգ, որի հիմքում ընկած է արժանապատիվ ու բարեկիրթ, հարգալից վարվելակերպը¹: Էթիկետային բանաձևը լեզվակաղապարային պահանջ է, որ նույնատիպ իրադրություններում կարգավորում է մարդկանց խոսքային վարքը լեզվագործածության զանազան կանոնների և արգելքների միջոցով: Այս բանաձևերը նաև լեզվի հիմնական գործառնություններից մեկի՝ սոցիալական վերահսկողության հիմնական զենքն են. դրանցից յուրաքանչյուրն ընդհանուր լեզվաբանության մեջ կոչվում է «տրամադրության բանաձև», «հասարակական շոյանք»...

Էթիկետային բանաձևագործածությունը միշտ նպատակաուղղվածություն ունի, մշտապես կշռվում է իրականության նժարով, և ժամանակը հաստատում է դրանք «նորացնելով» հին ճշմարտությունները:

Բառերի մասին սեպիրյան միտքը կարելի է վերագրել նաև խոսքային բանաձևերին. **վերջիններս նույնպես միայն բանալիներ չեն, նրանք կարող են նաև շղթաներ դառնալ:** Ճիշտ բանաձևը չզիտակցված ուժից կարող է վերածվել մարդկանց, նրանց նպատակների, ցանկությունների և վարքի վրա զգացական-հոգեբանական ներգործման հզոր միջոցի, ոչ ճիշտը դառնում է շղթա, արգելք ու պատնեշ. այսպիսի դեպքերում դրանցից ամեն մեկը հաղորդակցական իրավիճակի թելադրանքով կարող է «վերջինը լինել», և արդյունքը չկայացած հաղորդակցումն է, լեզվի՝ որպես հաղորդակցման միջոցի չեղարկումը...

Յուրաքանչյուր բանաձև պարտադրում է պատասխանատվություն կրել ընտրության և գործածության համար, ուստի և շատ կարևոր են լեզվական միջոցների ճիշտ ընտրությունը, բանաձևակենտրոն բառերի (հատկապես բայերի), կապակցությունների շեշտումը և այլն:

¹ Երևի թե ժամանակն է ամերիկյան կամ եվրոպական դպրոցների ավանդույթի հետևողությամբ հայկական դպրոցների ուսումնական ծրագրերում ներառել նման դասընթաց (այսպես՝ որևէ դպրոցականի ծննդյան օրը նշելուց հետո տվյալ դասաժամին վերջինս պետք է շնորհակալական խոսք ասի կամ նամակ գրի՝ արտահայտելով իր գոհունակությունը ասված խոսքերի, հանձնված նվերների, հատկացված ժամանակի համար և այլն...):

Հասարակության ներսում մարդկանց վարքագիծը կազմակերպվում է հետևյալ հակադրության վրա՝ 1. սովորական, ամենօրյա, կենցաղային, որ ընկալվում է, ընդունվում որպես «բնական», 2. հանդիսավոր, ծիսակատարողական, արարողակարգային: Առաջին եզրին բնորոշ էթիկետային կանոնները մարդը սովորում է ինչպես իր մայրենի լեզուն՝ առանց նկատելու՝ ե՞րբ, որտեղի՞ց, ո՞ւմ միջոցով: Երկրորդ եզրին բնորոշ խոսքավարվելակերպային կանոնները մարդը յուրացնում է ինչպես օտար լեզու՝ կյանքի թելադրանքով՝ համակցելով իր իմացածը պահանջվածի հետ...

Էթիկետային բանաձևերը բնորոշ են խոսքի թե՛ գրավոր, թե՛ բանավոր տարբերակներին: Տարբերակային լեզվահոգեբանական այսպիսի բևեռացումն առավել ընդգծվում է պատասխան բանաձևերի ընտրության ժամանակ՝ հաջորդականության կարգի պահպանմամբ կամ խախտմամբ: Գ. Լիխտենբերգը այսպիսի տողեր ունի. «Գրերի գյուտից հետո խնդրանքները շատ բան կորցրին իրենց ուժից, իսկ հրամանները, ընդհակառակը, շահեցին: Գրավոր խնդրանքները հեշտ է մերժել, իսկ գրավոր հրամանն ավելի հեշտ է արձակել, քան բանավոր: Ե՛վ մեկի, ն՛մյուսի համար պետք է համարձակություն ունենալ, իսկ երբ դա պետք է անել բանավոր, այն հաճախ չի բավարարում...»²: Բանավոր խոսքում էթիկետային բանաձևերի բովանդակությունը սպասարկվում է հնչերանգի բաղադրատարրերով («վերհատությային միավորներով»՝ ձայնի տոն, ուժգնություն, արագություն, տեմպ, տևողություն են): Ուստի բանաձևային համակարգում առավել ևս կարևորվում են վերջիններիս հնչերանգային կառուցվածքի, հնչերանգայթների հաջորդականության խնդիրները: Հայ քերականագիտության մեջ, ցավոք, ուսումնասիրվում են հնչերանգի շարահյուսական (որպես նախադասության ամբողջականության և տրամաբանական ավարտվածության ձևավորման միջոցի, ստորոգման արտահայտման ձևի) և եղանակավորող գործառույթները, այնինչ սրանց պետք է հարաբերակցել հնչերանգի հաղորդակցական գործառույթը, որով լեզվական ցանկացած միավոր փոխակերպվում է խոսքի, բանաձևի, «ֆրագի»: Խոսքային էթիկետային համակարգում առանձնահատուկ նշանակություն ունեն ոչ միայն ներբանաձևային, այլև միջբանաձևային հնչերանգային կառույցներում նվազագույն իմաստատարբերակիչ միավորների՝ հնչերանգայթների հերթականության դրսևորումները...

Լեզվի հաղորդակցական գործառույթը դրսևորվում է հաղորդակցական իրավիճակներում (իրադրություններում): Հաղորդակցական իրավիճակն ամենից առաջ ձևավորվում է ոչ լեզվական գործոններով, սակայն իր արտաքին ու ներքին պայմաններով, հանգամանքներով անմիջականորեն ազդում է լեզվագործածության, խոսքի կառուցման

² Գ. Զ. Լիխտենբերգ, Աֆորիզմներ, Եր., 1973, էջ 40:

վրա, դառնում հաղորդակցման ողջ գործընթացի պարտադիր և անխախտ բաղադրիչը: Հաղորդակցական մակարդակը տարբեր ենթամակարդակների հաջորդական իրացումն է. էթիկետային բանաձևերի համակարգը այդ իրավիճակի ենթամակարդակներից մեկն է՝ բազմաթիվ շերտերով: Կարելի է ասել այն ելակետային է, բայց և ամենասովորականն է, հասարակը, մակերեսայինը, քանի որ այս դեպքում բավարար է սոսկ էթիկետային բանաձևերի իմացությունը: Ինչպես երաժշտին կլիանգարի նվագելիս գործիքը կամ գործիքի ստեղները գտնելու համար մտածելը, ճիշտ այդպես էլ հաղորդակցվելիս մարդուն կլիանգարի դիմելիս, ողջունելիս, հրաժեշտ տալիս, շնորհավորելիս և նման դեպքերում համապատասխան միջոցներ ու ձևեր փնտրելը: Դրանք իրավիճակային պատրաստի կաղապարներ են, սակայն ուղենշում են, հարթում հաղորդակցման ողջ գործընթացը: Ինչո՞ւ իրադրային, իրավիճակային բանաձև և ոչ թե նախադասություն կամ բառակապակցություն, ոչ թե տեքստ: Իհարկե, քերականությունը արվեստ է, որ սովորեցնում է ճիշտ գրել և կարդալ, բայց այդ արվեստի դրսևորման, խոսքի մշակույթի ուսումնասիրության առումով հայ լեզվաբանությունը շատ բաց վանդակներ ունի (գրեթե բաց է նաև էթիկետային նորմի վանդակը)... Այսօր անհրաժեշտություն է դարձել ուսումնասիրել հաղորդակցական գործընթացն իր ամբողջության մեջ, իր բոլոր բաղադրատարրերով հանդերձ, և նման ուսումնասիրությունը վեր է նախադասությունից կամ տեքստից: Ո՛չ վերջինը, ո՛չ էլ նախավերջինը ինքնըստինքյան չեն կարող դառնալ արտահայտիչը հաղորդակցական ողջ գործընթացի: Դրանք հաղորդակցական իրավիճակի մեկ էջն են. իրավիճակային մյուս էջերը լրացվում են ենթատեքստային և արտատեքստային բաղադրիչներով, տրամաբանական-հոգեբանական դադարներով, ոչ լեզվական շարժումնաբանական հավելումներով, հաղորդակցաիրավիճակային զանազան այլ գործոններով, հանգամանքներով, արտաքին և ներքին պայմաններով:

Այսպիսով՝ ցանկացած ժողովրդի խոսքային գործունեության մշակույթը կարելի է ներկայացնել միայն և միայն հաղորդակցական իրավիճակներում. հենց այս մակարդակում էլ դրսևորվում է խոսքի մշակույթի բարձրագույն աստիճանը: Ահա թե ինչու հաղորդակցական նորմերն ընդհանուր առմամբ դառնում են և՛ բարոյագիտական ու վարվելակերպի, և՛ էթիկետային, և՛ խոսքային վարքի ու լեզվական նորմերի հանրագումարը: Վերջիններիս տարանջատումը սոսկ պայմանական է, պայմանականորեն էլ առանձնաբար ուսումնասիրում ենք էթիկետային (խոսքային վարքի) բանաձևային համակարգը:

Հաղորդակցական իրավիճակն ամբողջականորեն ներկայացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նրա բաղադրատարրերը, պայմաններն ու հանգամանքները: Մ. Աբեղյանը, անդրադառնալով խոսելու եղանակին, խոսքի վրա ազդող գործոններին, մոտավորապես հան-

գում է հաղորդակցական իրավիճակի նկարագրությանը. «Մարդկային հոգու կրթերն ու զգացմունքները խիստ բազմազան են... Բայց այսպիսի բաժանումն ավելորդ է, որովհետև խոսքի կիրքն արտահայտվում է առողջանությամբ և առանձին նշանակություն չունի կազմության տեսակետից... Խոսքի առողջանությունը կամ եղանակավորումը հիմնված է ձայնի ուժի կամ շեշտի, բարձրության և տևողության կամ ամանակի վրա... Խոսելու եղանակի վրա մեծ ազդեցություն ունին նաև բնական հատկությունը, խոսողի սեռը, տարիքը, սովորությունը, վայրկյանի հոգեկան վիճակը և այլն: Բարբառների մեջ ևս խոսվածքի եղանակները տարբեր են, ուստի և ո՞ր տեղացի լինելն ևս ազդում է խոսքի եղանակի վրա»³:

Խոսքային գործառույթը իրագործելի և հնարավոր է փոխհաղորդակցման դեպքում, որը տեղի է ունենում ինչ-որ տեղ, ինչ-որ ժամանակակետում: Ահա թե ինչու «**ես-դու-այստեղ-հիմա**» կողմնորոշիչ-ցուցիչները (կոորդինատները) բառաքերականական, ոճագեղագիտական միջոցների համապատասխան ընտրություն են թելադրում՝ լեզվական նորաձևության (մոդայի) և ճաշակի շրջանակներում: Բանաձևի ընտրությունը, սակայն, պայմանավորված է ոչ միայն իրադրահաղորդակցական գործընթացի տվյալ պահի թելադրանքով, այլ նաև, այսպես կոչված, նույն գործընթացի «անցյալով» և «ապագայով». առաջին դեպքում այն իր ձևավորմամբ և ոճավորմամբ պայմանավորված է արդեն գործածվածով, հակազդեցության արձագանք է, օրինակ՝ եթե թույլտվության բանաձև է հնչում տվյալ պահին, նշանակում է՝ նախորդել է խնդրանքը, եթե շնորհակալություն է, ուրեմն շնորհավորանքի խոսքեր են հնչել, կամ որևէ շնորհակալական գործ է կատարվել: Երկրորդ դեպքում արդեն պետք է կռահել բանաձևագործածության հնարավոր արձագանքները: Այսպես՝ հնչեցված հաճոյախոսությանն արդյոք կհաջորդե՞ն շնորհակալական խոսքեր, կամ՝ խնդրանքի բանաձևի ապատնիում ընտրված պատասխանը մերժման, թե՛ բավարարման բանաձևը պիտի լինի:

Հաղորդակցական իրավիճակի հիմնային, նաև բնութագրիչ բաղադրիչներն են՝

1. Բանաձևագործածողը. նա, ով ընտրում է բանաձևի տեսակը՝ խնդրանք, թե՛ մերժում, ողջոյն, թե՛ հրաժեշտ, ներում, թե՛ ... Լայն առումով՝ **հաղորդակցական իրավիճակի տերերը** (համագործակիցներ, հաղորդակցվողներ, համագրուցակիցներ, «փոխլրացուցիչներ»), ընդ որում՝ ոչ պակաս կարևոր հանգամանք է հաղորդակցվողների թիվը,

2. Բանաձևագործածական իրադրության տիպը՝ ներառյալ հաղորդակցման շարժառիթը, բանաձևագործածողի նպատակ(ներ)ն ու մտադրություն(ներ)ը, ծրագիրը,

3. հաղորդակցման ընդհանուր կողը,

4. հաղորդակցվողների՝

³ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Զ, Եր., 1974, էջ 458:

ա) **ազգային առանձնահատկությունները.** չկա մի ժողովուրդ, որ չունենա հաղորդակցման այս երակը. էթիկետային յուրաքանչյուր բանաձևի հետևում երևում է այն կրող ժողովրդի մանրանրբին դիմանկարը,

բ) **դասական բարեկրթության** (խոսքային և վարվելակարգային) **ժառանգության յուրացման աստիճանը.** խոսքային էթիկետի բանաձևավերը նրբերանգվում են «աշխարհի քարտեզի գույներով»⁴: Այլ ազգերի նաև բարեկրթության օրենքներն են ընկած հայի բարեկրթության հիմքում. դիստերվեզյան խոսքի համաբանությամբ՝ մարդ իմ անունն է, հայ իմ մականունը,

գ) 1) **սեռը,** 2) **տարիքը,** 3) **հասարակական դիրքը,** 4) **կրթության մակարդակը,** 5) **հանրահայտության աստիճանը,** 6) **զբաղմունքը,** 7) **զգացմունքային-կամային վերաբերմունքը** և **հոգեբանական որակները,** 8) **անձնական շահագրգռվածության աստիճանը** և այլն,

5. հաղորդակցման արտաքին ու ներքին պամանները. ա) իրադրական մթնոլորտը՝ պաշտոնական, կիսապաշտոնական և առօրեական, բ) տեղը (նիստերի դահլիճ, ընդունարան, խանութ...), գ) ժամանակային տևողությունը, դ) խոսքային ներգործության ընտրված ուղին կամ միջոցը (երես առ երես, ՁԼՄ և այլն),

6. ի վերջո, ինչպես ասում է Ա. Մակարենկոն, «կոստյումի (փողկապի), սենյակի, աստիճանների, հաստոցի էթետիկան բնավ պակաս նշանակություն չունի, քան վարքի էթետիկան»:

Իրավիճակային ցանկացած բաղադրատարրի փոփոխություն (ուղղում, շտկում, լրացում, տեղափոխություն, հաջորդականության խախտում) կարող է ազդել հաղորդակցման գործընթացի, նաև նրա արդյունք(ներ)ի վրա:

Հաղորդակցական ցանկացած իրավիճակ հատկանշվում է նաև խոսքաշարի բաղադրիչ լեզվամիավորների հերթականության, շարակարգության կամ տրամաբանական հաջորդականության կարգի պահպանմամբ: Խոսքային էթիկետի բանաձևային համակարգում վերջինս յուրահատուկ դրսևորում ունի: Հայ լեզվաբանության մեջ լեզվական-հաղորդակցական տարբեր մակարդակներում բառային-իմաստային կամ տրամաբանական հերթականության, գործողությունների միջև ժամանակների հաջորդման, նախորդման, համընթացության, կերպային դրսևորումների, շարակարգության կամ շարադասության,

⁴ Երբ Ցիցերոնը գնում է Հունաստան, նրա հույն ուսուցիչներից մեկը՝ Դիոնիսիոս Մագնեզիացին, լատիներեն չիմանալու պատճառով խնդրում է, որ նա ճառն արտասանի հունարենով: Լսելուց հետո վշտացած ասում է. «Քե գ, Ցիցերոն և, քեզ գովում եմ և հիանում քո արվեստով, բայց և տխրում եմ Հունաստանի համար, երբ տեսնում եմ, որ մեր միակ առավելությունը՝ բարեկրթությունը և պերճախոսությունը, քո մեղքով անցնում է հռոմեացիներին»: Պլուտարքոսի վկայությամբ՝ հույները հռետորական արվեստը բարեկրթության հետ միասին համարել են իրենց առավելությունը մյուս ժողովուրդների նկատմամբ:

թվարկումների ճշտության և նման այլ հարցերի առնչությամբ հաճախ է խոսվել հաջորդականության մասին՝ որպես կարգի կամ ենթակարգի⁵:

Մեր կարծիքով՝ այն ոչ միայն քերականական, այլև հաղորդակցական կարգ է: Լայն առումով էթիկետային բանաձևերի համակարգում հաջորդականության կարգի քննության հիմնակետ կարելի է դարձնել տեքստի վերաբերյալ ջահուկյանական ըմբռնումը: Գ. Ջահուկյանը «հենք»-ի, «հինույթ»-ի և «լիահինույթ»-ի կողքին առանձնացնում է նաև «առմիջուկային բաղադրիչներ»՝ ներածող և վերջավորող մասեր՝ տարբերակելով նախահենքային և վերջնահենքային բաղադրիչներ: Նա գրում է. «Երկրորդաբար որպես առմիջուկային միավորներ կարող են առանձնացվել այնպիսի բաղադրիչներ, ինչպես վերնագրերը, նյութի օրակարգային և արձանագրական ձևակերպումները, դիմողական բառերն ու արտահայտությունները, ձոները, բնաբանները, որոնք սովորաբար տեղադրվում են նախահենքերից առաջ, և ծանոթությունները, լրացական մեկնությունները, որոնք զետեղվում են վերջնահենքից հետո կամ էլ, ըստ տեքստի բնույթի և ընդունված կանոնների, բուն հենքի մեջ՝ էջերի տակ. առմիջուկային վերջնահենքային բաղադրիչներ են գրավոր հենքերի մեջ նաև անվանացանկերը, բանավոր և գրավոր խոսքում՝ վերջավորող և վարվելակարգային, քաղաքավարական բառերն ու արտահայտությունները (ցտեսություն, մնաք բարով և այլն)»⁶:

Էթիկետային բանաձևերը հաղորդակցական շղթայի առանձին հանգույցներից են, արտահենքային՝ այլ մակարդակի միավորներ, որոնք կցվում են տեքստային մակարդակին, և այդ հանգույցներից մեկի

⁵ Հաջորդականության կարգն անգամ լեզվի և խոսքի փոխհարաբերության հիմքում է ընկած՝ լեզու-խոսք-լեզու-խոսք. «Լեզվական միավորը, ստանալով անմիջականություն, դառնում է պրոցես և հանդես է գալիս որպես խոսքի միավոր, խոսքի միավորը, գրկվելով անմիջականությունից, վերածվում է լեզվական միավորի» (Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 21): Հեղինակը բայի մասին խոսելիս ժամանակի կարգի ենթահամակարգ է համարում հաջորդականությունը և նշում նրա 3 եզրերը՝ նախորդումը, հաջորդումը և համընթացությունը (տե՛ս նույն տեղը, էջ 284): Ըստ Վ. Քոսյանի հաջորդականության իմաստն առավել հաճախականությամբ դրսևորվում է ժամանակակից արևելահայերենում (տե՛ս «Բառակազմական կաղապարների զարգացումը հայերենում», Եր., 1990, էջ 378-379): Պ. Բեդիրյանը, խոսելով ճիշտ խոսքի կառուցման համար շատ կարևոր ոճական ու տրամաբանական հատուկ օրենքների մասին, կարևորում է տրամաբանական պահանջը. «Թվարկվող գույգերի կամ եռյակների եզրերն այնպես պետք է հյուսվեն, որ դրանց տրամաբանական հերթականությունը չխախտվի: Այս օրենքի պահպանման կարևորությունը ընդգծվում է հատկապես այն դեպքերում, երբ թվարկվող «խմբերի» ներսում բառերն իմաստով հակադիր են: ...Խոսքի բարձր մշակույթի լավ նշան է, երբ այն նաև տրամաբանական հաջորդականության խախտումներից է զերծ» («Հայ լեզուն և մեր խոսքը», Եր., 2007, էջ 179-183): Խոնարհման համակարգի բանաձևերի արտահայտած քերականական իմաստները ճիշտ հասկանալու, տեղին ու անսխալ գործածելու, ինչպես նաև լեզուների տիպաբանական հետազոտություններ կատարելու համար հաջորդականության կարգի տարրոշման անհրաժեշտությունն է ընդգծում Բ. Ներսիսյանը (տե՛ս «Հաջորդականության քերականական կարգը ժամանակակից արևելահայերենում» / Արդի հայերենի հիմնախնդիրներ, Եր., 2016, էջ 127-141):

⁶ Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Եր., 2003, էջ 77:

«գրգռումը» առաջ է բերում նաև մյուսի՝ հաջորդի՝ սպասելիի՝ ենթադրելիի շարժումը՝ «արթնացնում է» հաջորդ հանգույցը. սա հաջորդականության կարգն է խոսքային բանաձևերի համակարգում: Մեր հետաքրքրությունը հենց էթիկետային բանաձևերի արտատեքստային վերլուծությանը և տրամաբանական հերթականությանն ու հաջորդականությանն է առնչվում:

Իրավիճակային զանազան տիպի փոփոխությունների հետևանքով հաջորդականության կարգի փոփոխությունները ևս կարող են դառնալ արգելքներ հաղորդակցման իրականացման ճանապարհին: Խոսքային բանաձևերում շեղումները, հաջորդականության կարգի փոփոխությունները կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ ոչ դիտավորյալ և դիտավորյալ (կանխամտածված, միտումնավոր): Առաջինը վկայում է խոսքային էթիկետի բանաձևերին ոչ հստակ տիրապետելու, մասնավորապես խոսքի ոչ բարձր մշակույթ ունենալու մասին: Դիտավորյալ շեղումները, որոնք հնարավոր են միայն և միայն տվյալ անձի կողմից այդ նորմերի կատարյալ տիրապետման դեպքում, տարբերակվում են հաղորդակցական տվյալ իրավիճակին բնորոշ միտումնավոր ներգործությամբ և դրանք գործածողի նպատակադրությամբ:

Հաջորդականության կարգը կարող է խախտվել

Ա. հաղորդակցական իրավիճակի բաղադրատարրերի փոփոխության պատճառով,

Բ. ընդհանուր կողմի բացակայությամբ,

Գ. լեզվի բնությամբ պայմանավորված (բազմիմաստություն, փոխաբերություն, հավելում, կրճատում, վերադասավորում, տեղափոխություն, փոխարինում, զուգաձևություն և այլն),

Դ. «լեզվական խաբկանքի»⁷, նաև դադարի հաջորդմամբ: Ցանկացած էթիկետային բանաձևի կարող է հաջորդել «խաբկանք» բանաձևը: Այսպես բարևում ես՝ անմիջապես հաջորդում է հրաժեշտի խոսքը և այլն: Էթիկետային բանաձևերի հաջորդականության շղթայում հանգույցներից մեկն էլ դադարն է (լռությունը), և հաջորդականության այս հանգույցի քննությունն առնչվում է դադարագիտության հետ. «Խոսի ը իւելոք կամ լռի՛ր իմաստնաբար, ո՛վ մարդ» (Պյութագորաս): Իմաստնությամբ հատկանշվող տրամաբանական դադարները մտքերով են լի, իսկ հոգեբանական դադարները՝ զգացմունքներով: Դադարի հաջորդումը, կարծում ենք, բանաձևային հաջորդականության կարգի խախտում չէ. այս դեպքում հաղորդակցումը «զգեստավորված չէ» խոսքով, սակայն, ինչպես Պ. Սևակն է ասում, «Լավագույն խոսքը լռության խորքում լռին ասածն է»: Հաղորդակցական իրավիճակն ամբողջապես հասկանալու համար բանաձևագործածողը անհրաժեշտաբար պետք է վերծանի նաև չասված բանաձևը:

⁷ Ուսումնասիրվել է Պրահայի լեզվաբանական դպրոցի կողմից և գրականագիտության մեջ համարվում է ուշադրություն գրավելու, հետաքրքրությունը գրգռելու, լարվածություն ստեղծելու յուրատեսակ մեթոդ՝ հանկարծակի, շժմեցուցիչ:

Ե. Ցավոք, էթիկետային-խոսքային բանաձևերի կանոնակարգի և հաջորդականության շեղումներն առնչվում են նաև անտարբերության, անհարգալից վերաբերմունքի, բարոյական նահանջի (չի/չեն շնորհավորում, շնորհակալություն չի/չեն հայտնում և այլն), լեզվականոնների չիմացության, խոսքային ցածր մակարդակի (**Դուք**-ի փոխարեն **դու**-ի գործածություն, տարիքով ավագին **հաջող** ասելը և այլն), լեզվական կոպտության, լեզվացինիզմի (լինգվոցինիզմի), լեզվավուլգարիզմի (լինգվոլուգարիզմի) հետ, ինչպես օրինակ գոեհիկ դիմելաձևերի գործածությունը (**ասլե**, **աղջի**, **ֆաշի ստ**, **սաստանա**...), կամ՝ երբ ներողություն են խնդրում, որպես պատասխան հնչում է՝ **«ներողություն խնդրեք սեղանից (աթոռից)»**, շնորհակալական խոսքն ընդհատվում է **«Ձեր շնորհակալությունն ինձ պետք չէ»** գոեհկարանությամբ: Բնականաբար, քննությունը կատարվում է հաղորդակցական իրավիճակին համապատասխան ճիշտ բանաձևված, տրամաբանական հաջորդականությամբ հատկանշվող համակարգի շրջանակներում:

Խոսքային էթիկետի անբաժանելի մասը կազմող բանաձևերի գործածական «բնավորությունը» պայմանավորված է հաղորդակցական իրավիճակով (պաշտոնական, կիսապաշտոնական և ոչ պաշտոնական): Դրանք բաժանվում են 3 հիմնական խմբի.

1. Բանաձևեր, որոնք գործածվում են հաղորդակցման սկզբում,

2. Բանաձևեր, որոնք ըստ անհրաժեշտության կարող են գործածվել հաղորդակցական գործընթացի բոլոր ենթամակարդակներում,

3. Բանաձևեր, որոնք գործածվում են հաղորդակցման վերջում:

Ընդհանրապես տարբերակվում են էթիկետային բանաձևերի հաղորդակցական-իմաստային հետևյալ դաշտերը⁸.

- | | |
|-----------------------------|---------------------------------------------------|
| 1.«դիմելաձևի» | 11.«ծանոթության» |
| 2.«ողջունի» | 12.«հակառակման, անհամաձայնության» |
| 3.«հրաժեշտի» | 13.«խորհրդի, առաջարկության» |
| 4.«շնորհակալության» | 14.«շնորհավորանքի» |
| 5.«բարեմաղթանքի» | 15.«ցավակցության, վշտակցության» |
| 6.«խնդրանքի» | 16.«գնահատման, խրախուսման» |
| 7.«հրավերի» | 17.«հաճոյախոսության, գովեստի» |
| 8.«թույլտվության» | 18.«մերժման, հրաժարման» |
| 9.«ներողության» | 19.«համաձայնության, զիջման» |
| 10.«ուշադրություն գրավելու» | 20.«խոստովանության, զղջման» և այլն ⁹ : |

⁸ Խոսքի մշակույթի հարցերով զբաղվողներից շատերը սրանք անվանում են էթիկետային ժանրեր:

⁹ Մեր քննության շրջանակներից դուրս է նաև խոսքային վարքի կամ վարվելականոնակարգի էթիկետի հաղորդակցական իրավիճակին բնորոշ բանաձևային միավորների, նրանց գործածական յուրահատկությունների, ոչ լեզվական դրսևորումների ուսումնասիրությունը: Այս մասին տե՛ս **Ս. Ադիլխանյան**, Գործնական ճարտասանություն, Եր., 2007, էջ 60-65, **Չ. Աղաջանյան**, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007, էջ 418-427, **Յու. Սվետիայան** և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016, էջ 441-469: **Л. А. Венденская, Л. Т. Павлова, Е. Ю. Кашаева**. Русский язык и культура речи, Ростов-на-Дону, 2004:

Յուրաքանչյուր բանաձև մարդկային բանականության բյուրեղացումն է. նրանց ետևում գործողություններ պետք է տեսնել, շարժառիթներ, նպատակներ պետք է փնտրել, արդյունքներ կռահել: Նշանակում է՝ յուրաքանչյուրն ունի իր՝ ա) **շարժառիթը** կամ **դրդապատճառը**, բ) **նպատակը**, գ) **բովանդակությունը**: Այսպես՝ շնորհակալություն հայտնելով գիտակցում ես՝ քեզ համար ինչ-որ լավ բան են արել կամ ասել, հասկացում ես, որ կարևորում, արժևորում ես արվածը, կատարվածը, ասվածը, և քանդելով հիշողությանդ հենց այդ հանգույցը՝ «Շնորհակալությունը նրա իրավունքը չէ, ում շնորհակալություն են հայտնում, այլ պարտականությունն է նրա, ով շնորհակալ է լինում, շնորհակալություն պահանջելը հիմարություն է, անշնորհակալ լինելը՝ ստորություն» (Վ. Կյուչևսկի), համապատասխան բովանդակությամբ բանաձև ես հնչեցնում: Ընդ որում՝ բանաձևային յուրաքանչյուր դաշտ բնութագրվում է հոմանիշ բանաձևերի հարստությամբ¹⁰, և հաղորդակցական իրավիճակի կառուցաբաղադրիչների առանձնահատկություններով պայմանավորված՝ յուրաքանչյուր դաշտի յուրաքանչյուր բանաձևին հաջորդում է նույն կամ այլ դաշտի պատասխան բանաձևը՝ սովորաբար լեզվաոճական նույն ձևականոնով:

Ցանկացած հաղորդակցական իրավիճակի ամբողջական վերլուծությունը ցույց է տալիս, որ ողջույնի, հրաժեշտի, դիմելաձևային և ուշադրություն գրավելու բանաձևերը, հարգական արտահայտությունները վերջինիս պարտադիր բաղադրատարբերն են. ողջույնը՝ հաղորդակցման սկզբում, հրաժեշտը՝ վերջում, իսկ դիմելաձևերն ու հարգական արտահայտությունները, ուշադրություն սևեռելու բանաձևերը՝ հաղորդակցական իրավիճակի տարբեր պահերին: Բնականաբար, սրանք նաև էթիկետային մյուս բանաձևերի կազմիչներ են¹¹: Հաղորդակցվողների՝ միմյանց ծանոթ չլինելու իրավիճակում խոսքային գործունեության սկիզբը շարունակվում է ծանոթության բանաձևերով (անմիջական կամ միջնորդավորված): Այսօր լեզվական նորաձևության թելադրանքով աշխուժացել է ինքն իրեն ներկայացնելու տարբերակը, որի կարևոր լրացուցիչն է այցեքարտը...

Խոսքային էթիկետի ոչ պակաս կարևոր բաղադրատարբեր է հաճոյախոսությունը: Հարմար, տեղին, համապատասխան հնչերանգով բանաձևված հաճոյախոսությունը ազդում է հասցեատիրոջ վրա:

¹⁰ Հայտնի հրապարակախոս Ի. Լ. Անդրոնիկովը գրում է. «Простое слово «здравствуйте» можно сказать ехидно, отрывисто, приветливо, сухо, мрачно, равнодушно, заискивающе, высокомерно. Это простое слово можно произнести на тысячу разных ладов» (Л. А. Введенская, Л. Т. Павлова, Е. Ю. Кашаева, նշվ. աշխ., էջ 132): «Կա «այո» բառն ասելու հիսուն, իսկ «ոչ» բառն ասելու հինգ հարյուր ձև» (Բ. Շոու): Այս առումով հետաքրքիր է 1981 թ. Անգլիայում լույս տեսած պառլամենտական արտահայտությունների բառարանը, որում, օրինակ, **խարեքս** բառ-դիմելաձևն ունի 150 տարբերակ:

¹¹ Վերոհիշյալ բանաձևերը կադապարակագմության բաղադրիչ չենք դարձրել այն պարզ պատճառով, որ դրանք ընդհանրական են և հաղորդակցական իրավիճակում ցանկացած պահի կարող են հնչել:

Եթե հաղորդակցական գործընթացի սկիզբն ու ավարտը արտահայտող բանաձևերն ամենից լավ են հիշվում և տպավորվում, ապա **դիմելաձևերն իշխանություն ունեն մարդկանց վրա**: Դիմելաձևը խոսքային էթիկետի կարևոր և անհրաժեշտ բաղադրատարրերից մեկն է: Հաղորդակցական լեզվաիրավիճակի այս շերտին բնորոշ լեզվամիավորները կազմում են դիմելաձևային իմաստային դաշտը: Դրանց բազմազանությունն ու բազմառոտությունը, սոցիալական, տարիքային, սեռային, ազգային ու ազգակցական տարբերակները վկայում են, որ այն խոսքային էթիկետի ցավոտ հարցերից մեկն է նաև հայ լեզվաբանության մեջ: Ահա թե ինչու շատ դեպքերում հաջորդականության շարքում այս հանգույցը մնում է դատարկ... Հայերենին բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ խոսակցին մատնանշող երկրորդ դեմքի եզակի թվի արտահայտման տարբերակային դիմելաձևերի՝ «դու»-ի և «Դուք»-ի գործածությունն է, որը հատկանշվում է դիմային ու թվային նույնության հիմքի վրա դրսևորվող ձևային հակադրությամբ¹²: Գործուն է «դու→դու»-ի և «Դուք→Դուք»-ի համապատասխանության օրենքը, բայց, ինչպես ասում են, չկա կանոն առանց բացառության. հաջորդականության կարգի դրսևորումներից մեկն էլ «դու»-ից «Դուք»-ի և հակառակը՝ «Դուք»-ից «դու»-ի անցումն է...

Հաղորդակցման հենց սկզբում՝ 1-2 րոպեի ընթացքում են մարդիկ ամենայն ուշադրությամբ ուսումնասիրում իրար և մտապահում: Տարբեր հաղորդակցաիրադրություններում ծանոթների, նաև անծանոթների հանդիպումը սկսվում է ողջունելու արարողությամբ. «**Բարև**»-ն Աստծունն է». այս բանաձևումը երկրային կյանքի գույների կնիքն է կրում: Հաղորդակցական լեզվաիրավիճակի այս շերտին բնորոշ լեզվամիավորները կազմում են ողջույնի հաղորդակցական-իմաստային դաշտը (**բա րև / Ձեզ, ձեզ /, ողջո ւյն, բարի՛ գալուստ, բարի՛ / լույս, օր, երեկո, գիշեր /, բարո վ եկաք / եկար, հարգանքնե՛ր քս, Աստվա՛ծ օգնական** և այլն): Բանաձևագործածության նպատակն է շարունակել հաղորդակցումը: Ընտրությունը պայմանավորված է հաղորդակցական իրավիճակով: Արդյունքում բանաձևը դառնում է ազդանշան «ես քեզ տեսնում եմ», «ես քեզ ճանաչում եմ», «քեզ հանդիպելը հաճելի է», «ուզում եմ քեզ հետ հարաբերությունները շարունակել» և նման այլ տիպի գիտակցական ըմբռումների: Ազդանշանային այս շղթայում բնականաբար հասկանալի է, թե ինչ է նշանակում, երբ հաջորդականության կարգը խախտվում է՝ չի հնչում պատասխան ողջույնը, կամ դրան անմիջապես հաջորդում է հրաժեշտի խոսքը: Ողջույնի խոսքերին կարող են հաջորդել զգացմունքադատողական գանազան տիպի կաղապարային արտահայտություններ (**ինչպիսի՛**

¹² Ոչ բոլոր լեզուներն են ճանաչում այս տարբերակումը: Հայերենի այս առանձնահատկության գործածական յուրահատկություններն ու գործառական ոլորտները լիարժեքորեն ուսումնասիրված չեն:

հանդիպում / անակնկալ/, ա՛յ քեզ հանդիպում, ո՛ւմ եմ տեսնում, շա՛տ ուրախ եմ Ձեզ / քեզ, ձեզ / տեսնելու / ողջունելու / համար նն): Դրանց կարող են միախառնվել իրազեկչական, տեղեկատվական խոսքային տարբեր արտահայտություններ (ինչպե՞ս էք, Ձեր գործերն ի՞նչ վիճակում են, ինչպե՞ս էք զգում նն):

Հաջորդականության կարգի դրսևորման ընդհանրական կաղապարն է¹³ «ողջույնի բանաձև → պատասխան ողջույնի բանաձև»: Բանաձևային լիակաղապարն է՝ «ողջույնի բանաձև + ուրախության արտահայտություն + իրազեկչական տեղեկություններ → պատասխան ողջույն + գոհունակության խոսքեր + բարեմաղթություններ → երկու կողմերի կողմից նորից հանդիպելու ցանկության դրսևորման կաղապարային արտահայտություններ»:

Մարդկային հաղորդակցական գործունեության երակներից է շնորհավորական խոսքը: Բանաձևային այս դաշտն ամենաընդարձակն է (շնորհավորում եմ / Ձեզ / ձեզ / քեզ..., սրտանց / ամբողջ հոգով / սրտով / շնորհավորում եմ..., թույլ տվեք շնորհավորել..., ընդունեք իմ ամենաջերմ / սրտագին / շնորհավորանքները ...): Յուրաքանչյուր բանաձև ծնվում է անհրաժեշտությունից, օժվում գնահատողական երանգներով, «զգեստավորվում» ոճով և, ցանկությունների ու սիրո միախառնությամբ դառնալով օրհնանք ու բարեմաղթություն, հասնում է հասցեատիրոջը: Ըստ հաջորդականության կարգի՝ դրանց նախորդում են հրավերի բանաձևերը (թույլ տվեք Ձեզ հրավիրել..., սիրով հրավիրում ենք..., ուրախ կլինենք Ձեզ տեսնել...): Դրանց հաջորդում են օրհնանքներն ու բարեմաղթությունները, երբեմն-երբեմն ընդմիջարկվում են գովեստներով (կարելի է ասել՝ գովաբանական բանաձևներով), մեծ մասամբ զուգակցվում են նվերների կամ շնորհավորագրերի, շքանշանների, դիպլոմների հանձնմամբ՝ «տեսողական լեզվով», որն էլ կարող է իր հերթին «զգեստավորվել» բանաձև դառնալու ենթակա խոսքերով (ես ցանկանում եմ նվիրել..., թույլ տվեք հանձնել...): Ինչպես շեքսպիրյան հերոսն է ասում՝ «Եվ հետն էլ բառեր, այնպես քաղցրաբույր, որ այդ իրերն է՛լ ավելի թանկ են դարձնում»: Հաղորդակցական իրավիճակի թելադրանքով շնորհավորական բանաձևերը վերածվում են կենացի ու բաժակաճառի:

Հրապարակախոսական ոճում շնորհավորական խոսքն ունի իր առանձնահատկությունները. դրանք նաև լակոնիկ, կարճառոտ տեքստեր են, երախտագիտականներ: Այլ են գեղարվեստական խոսքում բանաձևվածները: Յուրատեսակ ձևավորում ունեն կրոնական բնույթի

¹³ Բանաձևային հաջորդականության կաղապարային շարքից առանձնացրել ենք 2-ը՝ ընդհանրակաղապարը (բանաձև→հաջորդող բանաձև) և լիակաղապարը, որն արտացոլում է տվյալ իրավիճակից բխող ցանկացած հիմնաբանաձևին տրամաբանորեն հաջորդող կամ նախորդող բանաձևերի շարքը: Հաջորդականության պայմանական նշանն է՝ →:

շնորհավորանքները¹⁴: Շնորհավորական բանաձևերը նաև մերօրյա գովազդի բաղադրիչներից են: Շնորհավորական խոսքերին և նվերների հանձնման արարողություններին հաջորդում են շնորհակալական խոսքեր ու արտահայտություններ: Հաղորդակցական այս նպատակով բանաձևային հաջորդականությունն այսպիսին է՝ «հրավեր → շնորհավորանք + բարեմաղթություն (+ նվերների հանձնում + բաժակաճառ) → շնորհակալական բանաձև»:

Վերջերս օրինական են դառնում տխուր, սգալից առիթների կապակցությամբ հրավեր-«հրավերքները», որոնք ավելի շուտ հիշեցումներ են ու հիշատակումներ: Այսպիսի իրավիճակում տեղին են ցավակցական բանաձևերը, որոնցում առավել ևս պիտի ընդգծվեն անկեղծությունը՝ «Անկեղծ խոսքերն ավելի լավ են թափանցում վշտի ականջների մեջ» (Շեքսպիր), զգուշությունը, նրբանկատությունը: Ցավակցական բանաձևերի էթիկետային դաշտը կազմող միավորներին (**սրտանց ցավակցում ենք /վշտակցում ենք/..., կիսում ենք Ձեր վիշտը, թույլ տվեք հայտնել մեր ցավը...**) սովորաբար հաջորդում են մխիթարանքի, սփոփանքի խոսքեր, երբեմն՝ խորհուրդներ, հուսավառության կամ բարեմաղթության բանաձևեր (**թող վերջինը լինի..., մի՛ հուսահատվեք..., Ձեզ ամո՛ւր պահեք** են): Ըստ բարեկրթության կանոնների՝ սրանց պիտի հաջորդեն շնորհակալական բանաձևեր, բայց հայկական միջավայրում ավելի շուտ դադարը, լռությունն են դառնում հաջորդականության կարգի արտահայտիչ: Ընդհանրակաղապարն է՝ «ցավակցական բանաձև → շնորհակալական բանաձև», լիակաղապարն է՝ «ցավակցական բանաձև + մխիթարանքի, բարեմաղթության խոսքեր, խորհուրդներ → շնորհակալական բանաձև»:

«Շնորհակալությունը ազնվագույն մարդկանց հատուցումն է վեհ» (Շեքսպիր): Հաղորդակցական լեզվաիրավիճակի այս շերտին բնորոշ բանաձևային դաշտի հիմնական լեզվամիավորները (**շնորհակալությունն /ո՛ւմ, ինչի՛ն կամ ումի՛ց, ինչի՛ց /..., շնորհակալ էմ..., չեք պատկերացնում՝ ինչքան շնորհակալ էմ, հազա՛ր շնորհակալություն /ո՛ւմ, ինչի՛ն/, թո՛ւյլ տվեք շնորհակալություն հայտնել... են**) կարող են դառնալ բանաձևային տարբեր դաշտերի տրամաբանական շարունակությունը:

Հաջորդականության կարգից շեղում պետք է համարել այն դեպքերը, երբ հանձնարարություն տվողը, առաջարկողը, խորհրդատուն լսում են շնորհակալական խոսքեր՝ ապագայում կատարվելիքին վերաբերող (**նախապես /կանխավ շնորհակալություն եմ հայտնում... են**):

¹⁴ «Քրիստոս յարեալ ի մեռելոց». առաքելաբարբառ ավետիսով շնորհավորում են Ձեզ հանուր մարդկության փրկիչ Հիսուս Քրիստոսի հաղթանակող Հրաշափառ Հարության ուրախատիթ տոնի կապակցությամբ և ամենաջերմ զգացումներով մաղթում ուժ, եռանդ ու նորոգ հաջողություններ: Թող Հիսուս Աստվածորդին իր Սուրբ Հարությամբ երկնառաք շնորհներով լցնի ընտանեկան ձեր ազնիվ հարկը. «Քրիստոս յարեալ ի մեռելոց», Ձեզ և մեզ մեծ ավետիս... Երկինքը լուսավոր է, ցնծում է երկինքը, թող ուրախությունը մեզ չլքի, մենք ուրախ ավետում ենք Հիսուս հարյավ ի մեռելոց...:

Հաջորդականության կարգը կարող է խախտվել նաև այսպիսի տեղափոխությամբ՝ «**մինչ Դուք շնորհակալություն կհայտնեք, ես կասեմ խնդրեմ /չարժե/**»։ **Շնորհակալ եմ**-ը կարելի է հավելել **անկեղծորեն, մեծապես, խորապես, ի սրտե** և նման լրացումներով, **շնորհակալություն հայտնել-ը՝ անկեղծ, խորին, սրտագին**։ Միայն է, սակայն, **շնորհակալություն հայտնել-ի** և **շնորհակալություն արտահայտությունների վրա մեծ** կամ **շատ** բառերն ավելացնելը։ Շնորհակալական բանաձևերը կարող են ուղեկցվել բարեմաղթություններով, օրհնանքներով, որոնց որպես պատասխան պետք է հնչեն (իսկ հաճախ չեն հնչում) արժևորող, գնահատող բանաձևեր՝ հաճախ զուգակցված մեղմասացություններով (**խնդրեմ, չարժե, ի՛նչ կարիք կա... , արվածը քիչ է... , Դուք չափազանցում եք... ևն**)։ Ընդհանրակաղապարն է՝ «շնորհակալական բանաձև → պատասխան գնահատողական բանաձև»։

Հատկապես գործնական էթիկետի շրջանակներում, մասնավորապես աշխատանքային գործունեության ընթացքում թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում անհրաժեշտ է լինում խնդրել կամ հրամայել, խորհուրդ տալ, համաձայնվել, թույլ տալ, արգելել, ինչ-որ մեկին ինչ-որ բան մերժել կամ ինչ-որ բանից հրաժարվել, նկատողություն հայտնել, դիտողություն կատարել։ Նման իրավիճակներում համապատասխան բանաձևային կաղապարներ են օգտագործվում, որոնք, ըստ հարկի, կարող են ներառել սաստկացուցիչ բառեր ու բառակապակցություններ, մեղմասացություններ, չափազանցություններ, հարգական արտահայտություններ և այլն։

Խնդրելու իմաստով բանաձևերին (**խնդրում եմ / ենք... , կարող եմ Ձեզ խնդրել... , Ձեզ դիմում եմ խնդրանքով... , պահանջելու պես խնդրում եմ... ևն**) հաջորդում են համաձայնության կամ մերժման բանաձևերը։ Ընդհանրակաղապարներն են՝ «խնդրանքի բանաձև → համաձայնության բանաձև» կամ «խնդրանքի բանաձև → մերժման բանաձև»։

Առաջարկների, խորհուրդների դեպքում բանաձևերը, հնչերանգային առանձնահատկություններով պայմանավորված, կարող են վերածվել խնդրանքի կամ հրամանի, կարգադրության։ Ըստ կանոնակարգի՝ սրանց ևս հաջորդում են նախ շնորհակալական, ապա համաձայնության կամ անհամաձայնության՝ մերժման բանաձևերը։

Նկատողությունը ևս նրբանկատորեն և պատշաճությամբ պետք է ձևակերպել (**նկատողություն է հայտարարվում... , ցավոք / դժբախտաբար, ստիպված ենք նախազգուշացնել** ևն)։ Բանաձևային այս դաշտի միավորներին, ըստ տրամաբանության պահանջի, սովորաբար հաջորդում են համաձայնելու կամ չհամաձայնելու բանաձևերը. առաջին դեպքում առավել հաճախ լրությունն է դառնում պատասխան բանաձև։

Համաձայնության, թույլտվության (**Ձեր / ձեր պահանջը կկատարվի, ամենայն սիրով կկատարենք... , համաձայն եմ / ենք... , արա՛ /**

արե՛ք այն, ինչ ճիշտ ես / եք համարում... , ինչպես Ձեզ հարմար է, թույլ եմ տալիս... , թող Ձեր ասածը լինի... նն) բանաձևերին հաջորդում է շնորհակալական խոսքը:

Հաղորդակցական իրավիճակը թելադրում է գործածել նաև մերժման բանաձևեր (ցավոք սրտի, չենք կարող բավարարել... , դժբախտաբար, Ձեր առաջարկը անկարելի է կատարել... , մեր ուժերից վեր է բավարարել Ձեր խնդրանքը... , մենք չենք հետաքրքրվում նման... , չնայած մեր գործադրած ջանքերին՝ ի վիճակի չենք կատարելու... , չեմ / չենք / կարող / անկարող ենք օգնել / լուծել / կատարել... , մեր ուժերից վեր է... , ներկա պահին դժվար է... նն): Ընդ որում՝ մերժում է նա, ով այդ իրավասությունն ունի: Այս դաշտի բանաձևային կաղապարների միջոցով հայտնի է դառնում, որ հաղորդակցվող կողմերից մեկի նպատակը չի իրագործվել կամ ինչ-որ ժամանակով հետաձգվում է: Քաղաքակրթության պահանջներին համապատասխան՝ մերժումը մեղմացվում է հարգալից վերաբերմունքի դրսևորման կաղապարներով¹⁵:

Մերժման բանաձևերին կարող են հաջորդել ներողամտության խոսքեր: Այսպես՝ եթե մերժվում է տարիքով ավագի առաջարկը, ապա այս դեպքում, որպես կանոն, դրանք ձևավորվում են ավստոսանքի խոսքերով՝ չկատարելու, կատարել չկարողանալու նրբերանգներով, մերժումը հիմնավորող փաստարկների օգնությամբ, իսկ ամենից հաճախ՝ սկզբում շնորհակալություն հայտնելով առաջարկի համար, հետո՝ ներողություն խնդրելով ստիպված մերժելու համար: Հաջորդականության կարգի դրսևորումն այսպիսին է՝ «Շնորհակալ եմ առաջարկի համար, սակայն, ցավոք, ստիպված եմ մերժել, քանի որ այն ժամանակավրեպ է (կամ՝ շատ զբաղված եմ), ներեցե՛ք ինձ»:

Հաղորդակցական իրավիճակներին բնորոշ են նաև մի կողմից՝ ներողություն խնդրելու կամ ներողամտություն հայցելու (ների՛ր / ներեցե՛ք... , խնդրում եմ ներել... , մեծահոգաբար ներեք... , ես /այնքա՛ն / մեղավոր եմ... , մեղք եմ գործել / Ձեր առջև /... , հազա՛ր ներողություն... , թո՛ւյլ տվեք ներողություն խնդրել / անկեղծորեն, խոնարհաբար, թախանձագին / ... , ուզում եմ ներողություն խնդրել... , եթե կարող ես, ների՛ր... , մի՛ գայրացիր նն), մյուս կողմից՝ ներելու, ներման բանաձևերը (ես Ձեզ ներում եմ... , ոչինչ, կարիք չկա ներողություն խնդրելու... , չարժե՛ մտածել... , մոռացե՛ք ... նն), ընդ որում՝ պետք է հիշել, որ ներողություն-ի կողքին շատ-ի գործածությունը սխալ է: Երբեմն՝ «Ներել պետք է լռությամբ, այլապես դա ի՞նչ ներում է» (Ս. Մորուս): Ընդհանրակաղապարն է՝ «ներողություն խնդրելու բանաձև → ներման բա-

¹⁵ Օրինակ՝ ճապոնացիները խուսափում են ժխտական ձևեր գործածելուց՝ դրանք համարելով խոսքային ցածր վարքի դրսևորում (թեյի երկրորդ բաժակից հրաժարվելիս ճապոնացին չի ասում. «Ո՛չ, չեմ ուզում», այլ՝ «Ես մի բաժակով էլ արդեն ինձ լավ եմ զգում»: Բսկ երբ ճշտում է հանդիպման տեղն ու վայրը, նշանակում է մերժում է, հրաժարվում է: Կամ՝ երբ ինչ-որ առաջարկի դեպքում անհրաժեշտություն է համարում խորհրդակցել կնոջ հետ, նշանակում է մերժում է):

նաձև»: Վերոբերյալ բանաձևերի հետ են կապվում խոստովանության և զղջման բանաձևերը. բանաձևակենտրոն են **խոստովանում եմ, ընդունում եմ, մեղավոր եմ, մեղք եմ գործել**, մյուս դեպքում՝ **զղջում եմ, փռմանել եմ, սխալվել եմ** բայերը: Խոստովանությունը հնչեցնողի իրավասությունն է, բայց և անցանկալի կամ բացասական իրողություն է. այն սովորաբար հարկադրաբար է կատարվում, պարտադրանքով, որով և տարբերվում է համաձայնության բանաձևերից: Իրադրահաղորդակցության նպատակն է հաստատել արդեն իսկ եղածը, գոյություն ունեցողը, ընդունել մինչ այդ չընդունածը, մերժելին և տրամաբանական հերթականության պահանջով ներողություն խնդրել: Ներողությունների ետևում ներելի ու աններելի, մեծ ու փոքր մեղքեր, հանցանքներ ու նսեմացումներ, վիրավորական գործողություններ պիտի տեսնել, բայց և պիտի լսել հազարամյակների ճիշդ՝ խոստովանում է մեղքը, զղջում է արածի կամ ասածի համար, **ներողություն է խնդրում միայն ուժեղը... Ներում է միայն ուժեղը...**

Հրաժեշտի բանաձևերը բնորոշ են հաղորդակցական իրավիճակի վերջնամասին: Դրանք կազմում են խոսքային էթիկետի՝ հրաժեշտի նշանակությամբ արտահայտությունների հաղորդակցական-իմաստային դաշտը (**ցտեսություն և** (ըստ Աստվածաշնչի՝ «ցտեսություն ասում են միայն բարեկամներին»), **մնա՛ք բարով, բարի՛ն ընդ՝ ձեզ, թո՛ւյլ տվեք հրաժեշտ տալ / հեռանալ, պատիվ ունեն, բարի՛ գիշեր, մինչ՝ նոր հանդիպում, մինչ՝ վաղը / երեկո** ևն): Հրաժեշտի խոսքերին զուգակցվում են, կամ դրանց հաջորդում են խնդրանքի բանաձևեր և բարեմաղթություններ (**նորի՛ց համեցեք, մենք՝ նորից կհանդիպենք... մի՛ մոռացեք... միայն լավը հիշեք... հրաժեշտ չեմ տալիս... մինչ՝ նոր հանդիպում** ևն): Հրաժեշտի բանաձևի պատասխանը հրաժեշտի նույն կամ հոմանիշ բանաձևն է՝ բարեմաղթանքներով, խնդրանքով, նորից հանդիպելու հույսով: Հիմնակաղապարն է՝ «հրաժեշտի խոսք → հրաժեշտի խոսք», լիակաղապարը՝ «հրաժեշտի բանաձև + բարեմաղթության բանաձև → հրաժեշտի բանաձև + բարեմաղթության, նորից հանդիպելու խնդրանքի՝ ցանկության բանաձևեր»:

Այսպիսով՝ խոսքային էթիկետի անբաժանելի մասն են կազմում բանաձևային խոսքերը: Դրանց քննությունը պետք է կատարել հաղորդակցական իրավիճակից ելնելով: Վերջինս հայ լեզվաբանության մեջ գրեթե ուսումնասիրված չէ: Էթիկետային բանաձևերը արտահենքային միավորներ են և բաժանվում են հաղորդակցական-իմաստային տարբեր դաշտերի: Խոսքային վարվելակերպի բանաձևային համակարգում պակաս կարևոր չէ տրամաբանական հաջորդականությունը. անհրաժեշտ է հետևել հաջորդականության կարգը նորմավորող կանոններին, որոնք, սակայն, անխախտ չեն:

Ի վերջո՝ նաև խոսքային-էթիկետային բանաձևականոնակարգի իմացությամբ ենք «կամուրջ դառնում մեր և մեր լեզվի դարեդար անցումին»...

Բանալի բառեր - վարվելակարգ, խոսքային էթիկետ, հաղորդակցական իրավիճակ, իրավիճակային բաղադրատարրեր, հաղորդակցվողներ, խոսքային բանաձև, հաջորդականություն, հաղորդակցական-ինաստային դաշտ, հաղորդակցական շեղումներ

ЗАРИК АГАДЖАНИЯН – Коммуникативная ситуация и очередность формул этикета. – Неотъемлемую часть этикета составляют речевые формулы. Исследовать их нужно, исходя из коммуникативной ситуации, которая в армянском языкознании почти не изучена. Этикетные формулы являются собой внеоптные соединения и в смысле применения делятся на различные коммуникативно-смысловые поля. В формульной системе речевых манер важна логическая очередность, необходимо следовать её принятым правилам, которые, однако, далеки от незыблемости...

Система формул, следующая этикетно-речевой норме, – это не только отражение нынешней ситуации в любом языке, но и веха пройденного им многовекового пути.

Ключевые слова: коммуникативная ситуация, правила поведения, речевой этикет, норма этико-речевая, устойчивые формулы, очередность, адресат, адресант, обращение, этико-речевые ошибки

ZARIK AGHAJANYAN – Communication Situation and the Succession Category of Etiquette Formulae. – Speech formulae form an indivisible part of the etiquette. Their examination should be based on the speech situation. The latter has practically not been studied in Armenian linguistics. Etiquette formulae are divided into different communicative-semantic fields. In the system of speech etiquette, the logical succession is of no minor importance: it is important that one should follow the rules standardizing the category of succession, which, of course, are not inviolable.

The formulaic system defined by the speech etiquette is not only the reflection of the present state of any language but also its everlasting guideline.

Key words: etiquette, etiquette of speech, situation of communication, components of situation, addresser–addressee, speech formula, succession, communicative-semantic field, , pause, etiquette-verbal mistakes